ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

61/3869 «18» 12 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Ս. Սարգսյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 27-ը, ժամը 10:30-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014թ. դեկտեմբերի 27-ը, ժամը 10:30-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/42»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատարող՝ Ս. Սարգսյան
հեռ. 514-239